70-ՐԴ ՆԻՍՏ

18 փետրվարի 19.

Սկսվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Տեր-Խաչատրյանի.* մինիստրական օթյակում են ներքին գործոց, արտաքին գործոց, զորական մինիստրները և խնամատարության ու ֆինանսների մինիստրների օգնականները:

Ավագ քարտուղար - Կարդում է Մինիստր-նախագահի հայտարարությունն այն մասին, որ ինքը Ամերիկա գնալու պատճառով իրեն պաշտոնակատար է նշանակում ներքին գործոց մինիստր Խատիսյանին մինչև խորհրդի որոշումը:

Հ. Բուդաղյան - Մեր ֆրակցիան առաջարկում է հաստատել Մինիստր-նախագահի կարգադրությունը:

Կ. Գյուլնազարյան - Մեր ֆրակցիան նույնպես առաջարկում է հաստատել՝ նկատի ունենալով այն բարեմասնությունները, որ ունի պ. Խատիսյանը: Մենք հույս ունենք, որ նա պատվով կտանի հիշյալ պաշտոնը:

Հ. Ազատյան - Մենք անձնապես դեմ չենք, որ պ. Խատիսյանին տրվի այդ պաշտոնը, միայն առաջարկում ենք խնդիրը դնել հաջորդ նիստի օրակարգի մեջ՝ ըստ էության քննելու համար: Կարծում ենք հասել է ժամը, երբ հիմնովին պիտի վերջ տա մեր կառավարությունը Քաջազնունու քաղաքականությանը:

Քվեարկությամբ ընդունվեց դաշնակցական ֆրակցիայի առաջարկը՝ Մինիստր-նախագահի բացակայության միջոցին իբրև պաշտոնակատար ճանաչել ներքին գործոց մինիստր Ալ. Խատիսյանին:

Արտաքին գործոց մինիստր - Պատասխանում է սոց.-դեմ. ֆրակցիայի այն հարցերին, որ վերաբերում է հայ-վրացական բանակցություններին:

Կոնֆերանսում ընդունված պայմանները այստեղ արդեն կարդացվել են. մեր ստացած տեղեկության համաձայն վերջնականապես ստորագրված ու վերջացած կարելի է համարել այն: Մեզ հայտնի է և այն, որ կոնֆերանսը ընտրել է մի

մարմին հայերից ու վրացիներից՝ գնդապետ Ստյուարտի գլխավորությամբ: Այդ մարմնի պարտականությունն է հսկել կոնֆերանսի որոշումների իրագործմանը:

Պատվիրակությունը չի վերադառնում, որովհետև կան դեռևս մի շարք խնդիրներ լուծելու, ինչպես օրինակ՝ երկաթուղային հաղորդակցություն, տրանզիտ և այլն, իսկ ամենագլխավոր պատճառն այն է, որ մեզ չի հաջողվում վրաց կառավարության [հարուցած] դժվարությունների շնորհիվ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնել Վրաստանի կառավարությանը կից: Մեր պատվիրակությունն ահա այդ բացի հետևանքով մնում է Թիֆլիսում՝ մի տեսակ միջնորդի դեր կատարելով երկու կառավարությունների միջև: Ամենայն հավանականությամբ պատվիրակությունն յուր բոլոր տեսակի գործերը կվերջացնի և կգա մինչև մարտի 1-ը:

Հ. Ազատյան - Ինչո՞վ է հիմնավորում վրաց կառավարությունը մեր դիվանագիտական ներկայացուցչության չընդունելը:

Արտաքին գործոց մինիստր - Գեգեչկորին հայտնել է մեր պատվիրակության, որ վրաց ժողովրդի հասարակական կարծիքն այն աստիճան գրգռված է, որ ինքը չի համարձակվում այդ հարցը դնել ո՛չ կառավարության և ո՛չ էլ խորհրդարանի առաջ:

Բժ. Բաբալյան - Քաղաքական պայմաններն ու հարաբերություններն Անդրկովկասում վերջին ժամանակները փոխված են, և Վրաստանի ու նրա հարևան պետությունների հարաբերությունը փոխվել է թշնամականի. ներկայումս, կարելի է ասել, որ միայն մեր վերաբերմունքն է բարեկամական դեպի Վրաստանը: Այսպիսի քաղաքական կացության մեջ մի անգամ ևս պետք է փորձել մեր դիվանագիտական միսիան վերականգնել Վրաստանում:

Արտաքին գործոց մինիստր - Մենք հիմք չունենք պնդելու, որ Վրաստանի հարաբերությունները մյուս հարևանների հետ թշնամական են: Այն հուշագրերը, որ տալիս է վրաց կառավարության այս կամ այն հարևանը, հիմք չեն կարող ծառայել այն կարծիքին, որ հայտնում է պատգամավոր Բաբալյանը, նման հուշագրեր տրվում են և ուրիշներին:

Թ. Ավդալբեկյան - Ինչու՞ մեր կառավարությունը չի մտածում հայ-վրացական միջադեպի վերաբերմամբ եղած փաստաթղթերը հրապարակել, ինչպես, լսելով, այդ արդեն արել է վրաց կառավարությունը, «Սպիտակ գիրք» վերնագիրը տալով հրատարակության: Մենք կարծում ենք, մեր կառավարությունը նույնպես պիտի հրատարակի մի սպիտակ գիրք և իրեն սպիտակեցնի:

Արտաքին գործոց մինիստր - Պիտի հայտարարեմ, որ կառավարությունը կարիք չունի սպիտականալու, որովհետև նա չի սևացել երբեք, սակայն պիտի ավելացնեմ, որ հավաքում ենք արդեն փաստաթղթերը հրատարակելու, միայն սպասում ենք որոշ փաստաթղթերի Թիֆլիսից. բոլորը ի մի հավաքելով՝ կհրատարակենք շուտով:

Զինվորական մինիստր - Պատասխանում է սոց.-դեմ. ֆրակցիայի այն հարցումին, որ վերաբերում է զորացրման:

Զորացրումը կանգնեցրել էի, որովհետև ծառայության տարիք ունեցողների զորահավաքը չէր տալիս պահանջված թիվը, սակայն երկու օր առաջ կարգադրել եմ շարունակել զորացրումը: Աշակերտների վերաբերմամբ զորացրումը չի իրագործվել այն պատճառով, որ դպրոցները բացված չեն եղել:

Ներքին գործոց մինիստր - Պատասխանում է սոց.-դեմ. ֆրակցիայի հարցումին.

1. Թե ինչու՞ գավառներում հետգնման տուրքը կառավարությունը հավաքում է կալվածատերերին վճարելու:

1918թ. մարտին Անդրկովկասյան կոմիսարիատի որոշմամբ տուրքը վերացված է, այդ հիման վրա էլ մեզնում կարճած է հիշյալ տուրքը և նոր կարգադրություն չի եղել նորից հավաքելու:

2. Ինչու՞ միլիցիոներներն օգնության չեն հասնում կողոպուտի ու սպանության ենթակա քաղաքացիներին:

Նախանցյալ նիստին ես մի ուրիշ առիթով իմ պատասխանը տվել եմ այդ հարցումին: Բացատրեցի ու պարզեցի իմ ծրագիրն ու ցանկությունները: Այժմ միայն կավելացնեմ, որոշ քայլեր արվել են անկարգությունները վերացնելու նպատակով և շարունակվելու են: Պիտի նկատի ունենալ մի շարք հանգամանքներ, որոնք պատճառ են դառնում միլիցիայի՝ իր կոչման բարձրության վրա չկանգնելուն: Միլիցիոներներից յուրաքանչյուրն ստանում է ամսական 300 ռ., այս երկու-երեք ամիս է, որ չեն ստացել այդ չնչին ռոճիկը: Այդպիսի պայմանները ստիպում են միլիցիոներներին զեղծումներ կատարել, մեղսակցել կողոպուտների և այլն: Միլիցիայի պետն ինձ ներկայացրել է մի ցուցակ միլիցիոներների, որոնք կատարել են այս կամ այն ծանր հանցանքը, դոքա պիտի հեռացվեն ու պատասխանատվության կանչվեն: Սակայն խնդիրը նրանումն է, որ կամ պիտի եղած միլիցիոներների ռոճիկներն ավելացնել. որ ինձ թվում է, թե հնարավոր չէ, կամ միլիցիոներների թիվը կրճատել և մնացածներին տալ այնքան ռոճիկ, որ պատճառ չունենան այս կամ այն հանցանքը գործելու: Չպիտի մոռանալ նաև, որ միլիցիայի մեջ գիտակից անձնավորություններ չեն մտնում:

Քաղաքիս գործերն առհասարակ կանոնավորելու համար սկսել ենք խորհրդակցել քաղաքագլխի հետ: Հույս ունենք, որ կարճ միջոցում մեզ կհաջողվի որոշ դրական արդյունքի հասնել:

Շնորհակալություն խորհրդարանի այն վերաբերմունքի համար, որ ցույց տվեց ինձ Մինիստր-նախագահի պաշտոնակատար հաստատելով: Պիտի հայտնեմ, որ շուտով կկարդացվի կառավարության դեկլարացիան, որ կլինի այն, ինչ պիտի տար պ. Քաջազնունին: Իմ առանձին դեկլարացիան արդեն հայտնի պիտի լինի խորհրդարանին իմ մի քանի զեկուցումներից:

Հ. Ազատյան - Կառավարությունը համարձակություն պիտի ունենա ծերբակալելու այն մի փոքր խումբ զինված մարդկանց, որոնք անկարգության, կողոպուտի, սպանության հեղինակներն են: Եթե կառավարությունն այդ համարձակությունը չի ունեցել, չի կարելի մեղադրել քաղաքացիներին, որ նրանք չեն ցույց տալիս հանցագործներին:

Ներքին գործոց մինիստր - Կառավարությունը չի կարող ենթադրություններով սրան կամ նրան ծերբակալել ու բանտ նստեցնել: Հարկավոր են փաստեր, իսկ փաստեր տվողը ժողովուրդը պիտի լինի: Եթե վերջինս կհրաժարվի փաստեր ու ցուցմունքներ տալուց, այն ժամանակ անկարգությունները զսպելու հնարավորություն չի ունենա կառավարությունը:

Խնամատարության մինիստրի օգնական - Պատասխանում է պատգամավոր Բաբալյանի հարցումին, թե ինչու՞ Սարդարապատի շրջանը չալթուկ չի ուղարկել:

Սրանից մի երեք օր առաջ ուղարկել ենք Իգդիր 825 փ. չալթուկ մեր ներկայացուցչի անունով օգնություն հասցնելու և Սարդարապատին: Սարդարապատ է ուղարկված և գարի:

Բժ. Բաբալյան - Միայն Սարդարապատ գյուղի մասին չէ խոսքը, այլ շրջանի, որ 14 գյուղ ունի իր մեջ: Եթե չկա ցորեն կամ գարի, իհարկե, պետք է ուղարկել այն, ինչ որ ունենք մեր ձեռքին, այսինքն՝ չալթուկ: Մինիստրի պարոն օգնականն ասաց, որ չալթուկ ուղարկել է Իգդիր: Եվ պիտի ասեմ, որ դրանից սարդարապատցու փորը չի կշտանա, ինչու՞ Իգդիր և ոչ թե ուղղակի Սարդարապատ:

Տ. Մուշեղյան - Սուրմալու գնալու համար կազմված պառլամենտական հանձնաժողովի կողմից հայտնում է, որ մինչև օրս չի հաջողվել գնալ որոշված վայրը՝ փոխադրական միջոցների բացակայության շնորհիվ, չնայած որ հանձնաժողովը կաշվից դուրս է եկել և սպառել բոլոր միջոցները: Մասնավոր կառապաններն պահանջում են 10-15 հազար ռուբլի, մինչդեռ հանձնաժողովին հատկացված է ընդամենը 7 հազար ռուբլի:

Առաջարկում է խորհրդարանին կամ ազատել հանձնաժողովին այդ պարտականությունից, կամ հնարավորություն ու միջոց տալ գնալու:

Հ. Ազատյան - Առաջարկել կառավարության՝ տրամադրելու իր ձեռքին եղած կառքերը, ավտոմոբիլները կամ ձիերը հանձնաժողովին:

Մինիստր-նախագահի պաշտոնակատար - Բացատրում է, որ կառավարությունը ոչ մի միջոց չունի այդ հանձնարարությունը կատարելու, որովհետև չնայած ավտոմոբիլներ կան, սակայն բենզին բոլորովին չկա. թե' կառքերի և թե' զորքի ծիերն այն դրության մեջ են, որ նրանցով կարելի կլինի թերևս միայն մոտիկ մի գյուղ գնալ և ոչ թե Սուրմալու 10-15 օր ճանապարհորդել:

Թ. Ավդալբեկյան - Միջոցներ կան, բայց կառավարությունը չի ուզում տալ: Բավական է հիշել դեկտեմբերի 25-ը՝ քաղաքային ընտրությունների օրը, երբ բազմաթիվ ավտոմոբիլներ և կառքեր քաղաքացիների անցուդարձը փողոցներում կանգնեցրել էին: Չէ՞ որ դրանից առաջ էլ նույն կառավարությունն ասում էր, թե միջոցներ չունեն:

Եթե բենզին չկա, հապա ինչպես են կարողանում դաշնակցական գործիչները ավտոմոբիլներով գնալ այս ու այն կողմ՝ Վաղարշապատ, Աշտարակ և այլն: Մենք չենք հավատում այն բանին, որ կառավարությունը միջոցներ չունի:

Ե. Սարգսյան - Բողոքում եմ նախագահի դեմ, որովհետև նա թույլ է տալիս նակազից շեղումներ անել: Խոսքն այստեղ կառավարության ունեցած միջոցների մասին է, մինչդեռ որոշ կարգի պատգամավորներ խոսում են այն մասին, թե դաշնակցական գործիչները այս ու այնտեղ են գնում, այս են անում, այն են անում, և նախագահը չի կանգնեցնում նոցա: Ավդալբեկյանն ու ընկերները սովորություն են դարձրել իրենց անտեղի հարցերով ու հարցապնդումներով խորհրդարանը դարձնել այն անվայել հիմնարկությունը, որ իրենք են ցանկանում:

Նախագահ - Շեղումն չկա նակազից, այլ հարցը բազմակողմանի ձևով լուսաբանելու համար թույլ եմ տալիս պատգամավորներին արտահայտվելու:

Վ. Մինախորյան - Եթե դրությունը այնպես է, իրոք, ինչպես ներկայացրեց Մինիստր-նախագահը, այն դեպքում մեզ միայն մի բան է մնում անելու՝ փակել Խորհրդարանի դռները, վերջացնել ամեն բան, և ամեն մարդ գնա իր տուն: Սակայն մեզ թվում է, որ այդպես չէ դրությունը: Միջոցներ կան, միայն թե կառավարությունը չի ցանկանում տալ, ուստի մենք առաջարկում ենք քվեարկության դնել հետևյալ բանաձևը. «Վաղը նեթ Մինիստր-նախագահը հնարավորություն տա հանձնաժողովին՝ մեկնելու որոշված վայրը»:

Նախագահ - Չեմ կարող այդպիսի մի բանաձև դնել քվեարկության:

Հայտարարվում է՝ 15 րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվում է Տեր-Խաչատրյանի նախագահությամբ:

Դ. Զուբյան - Զեկուցում է հայոց եկեղեցական ծխական և միջնակարգ դպրոցները պետականացնելու առթիվ օրենսդրական և դպրոցական խառը ժողովի որոշման մասին:

Թեր ու դեմ խոսում են՝ *Ս. Տեր-Մարտիրոսյան, Հ. Ազատյան, լուսավորության մինիստր, Հ. Ստեփանյան, Բուդաղյան, Զուբյան:*

Քվեարկությամբ ընդունվում է հանձնաժողովների խառը նիստի որոշումը՝

1. Հանձնարարել լուսավորության մինիստրին մինչև մայիսի 1-ը մշակել մի օրինագիծ՝ հայկական դպրոցները պետականացնելու մասին և

2. Հանձնարարել լուսավորության մինիստրին մշակելու և հաջորդ նիստին խորհրդարան բերելու մի օրինագիծ՝ հայոց ծխական և միջնակարգ դպրոցների ուսուցչության ռոճիկը 30 տոկոսով ավելացնելու և մի ամսվա ռոճիկի չափով նպաստ տալու մասին, համաձայն ուսուցչական միության վարչության դիմումի:

Պարենավորման մինիստրի պաշտոնակատար - Տեղեկություններ է տալիս պարենավորման վիճակի մասին և շեշտում այն աղբյուրները, որտեղից պիտի պարեն ստանանք՝ Կարս, Ռուսաստան, Բաթում, Էնզելի և այլն: Մոտավորապես փետրվարի 20-ից սկսած օրական վեց վագոն հաց պիտի ստանանք Կարսից՝ մեզ հատկացված 250 հազար փթից:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է հաշմանդամ զինվորների համար ապաստարան հիմնելու օրինագծի մասին, որ ներկայացրել է զորական մինիստրը:

Օրինագծի մասին խոսում են՝ *Տ. Մուշեղյան, բժ. Բաբալյան, Կ. Գյուլնազարյան, Բուդաղյան, Ա. Մելիք-Աղաջանյան, բժ. Գրո, ներքին գործերի մինիստր:*

Միաձայն որոշվում է սկզբունքով ընդունել ապաստարանի միտքը, բայց չհանձնել զորական մինիստրության, այլ հանձնարարել խնամատարության մինիստրության՝ նոր օրինագիծ մշակելու:

Նույնը - Զեկուցում է Պոլսում հիմնվելիք դիվանագիտական ներկայացուցչության նախահաշվի մասին:

Որոշվում է հետաձգել նախահաշվի քննությունը՝ ֆրակցիաներում ավելի լավ ծանոթանալու համար:

Նույնը - Զեկուցում է զորական մինիստրության մեջ ոչ զինվորական ծառայողների վրա ևս մի ամսվա ռոճիկի չափով նպաստ տարածելու օրինագծի մասին:

Որոշվում է մերժել:

Նույնը - Զեկուցում է Կուբանի կառավարության մոտ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու օրինագծի և նախահաշվի մասին (Դ ընթերցում):

Օրինագիծն ընդունվում է և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Ն. Աղբալյան - Զեկուցում է Ավստրիայից և Գերմանիայից եկող հայ ռազմագերիներին նպաստ տալու օրինագծի մասին:

Ֆինանսական հանձնաժողովը առաջարկում է այդ նպատակի համար 100 հազար ռուբ. վարկ բաց անել արտաքին գործոց մինիստրության անունով՝ հաշվելով յուրաքանչյուր գերուն 150 ռ. միջին հաշվով:

Օրինագիծն ընդունվում է:

Ներքին գործոց մինիստր - Պատասխանում է սոց.-դեմ. ֆրակցիայի նոր հարցումին: Ո՞վ է որոշել երկաթուղիների տարիֆը:

Նոր տարիֆ չի որոշված, սակայն այդ մասին խորհրդակցում են Թիֆլիսից եկած մի խումբ հայ ինժեներների հետ: Հույս ունեմ, որ մի երեք շաբաթից հետո օրինագիծ կներկայացնեմ խորհրդարանին:

Նիստը վերջացավ գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 26 փետրվարի 1919թ.